Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա. Սահակյան

Դասղեկի տարեկան աշխատանքային ծրագիր

Արագածոտնի մարզ Լեռնարոտի Գեղազնիկ Միքայելյանի
անվան միջնակարգ դպրոց

դասարան 12

Դասղեկ՝ Հայկ Մամիկոնյան

դասղեկի անուն, ազգանուն

2023-2024 ուս. տարի

1. **Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը) 12-րդ դասարանում սովորում է 3 աշակերտ, որից 2-ը աղջիկէ, 1-ը տղա: Ունենք գերազանց սովորող աշակերտներ: Դասարանում աշակերտները համախմբված են: Դասարանի աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:**

2.Ուսումնադատիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնադատիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությունը, հրավիրել ծնողական ժողովներ , որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը : Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, համագործակցություն, փոխօգնություն):

- **3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**
- ***3.1* Հոգևոր դաստիարակություն** *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ:*
- **3.2 Գեղագիտական դաստիարակություն** *Տարբեր միջոցներով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի մարդու կյանքում: Բացի այդ՝ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*
- **3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն** *Հայրենասիրության կրթության նպատակով կազմակերպել քննարկումներ: Նշել մի շարք հերոսների անուններ և թվարկել բնավորության այն գծերը, որոնք հայրենասիրության ցուցիչ են:*
- **3.4 Ֆիզիկական դաստիարակություն** *Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզիկական վիճակին: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:*
- **3.5 Աշխատանքային դաստիարակություն** *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , թե ի՞նչ հմտություններ են պահանջվում՝ աշխատաշուկայում մրցունակ լինելու համար:*
- **3.6 Բնապահպանական դաստիարակություն** *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում քննարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:*
- **4. Դպրոց-ընտանիք կապը** *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը պետության կորիզն է: Միևնույն ժամանակ ուսուցիչները պիտի գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոցն ու ընտանիքը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը
1	Ծնողական և դասարանական համատեղ ժողով, ուստարվա անելիքների ու խնդիրների քննարկում:	5.09.2022
2	«Մենք տարբեր ենք» թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհայացք	12.09
3	«Մասնագիտության ընտրություն» թեմայով քննարկում:	19.09
4	Հարցաթերթիկի լրացում «Իմ լավ ու վատ կողմերը», «ես՝ ընկերներիս աչքերով»:	29.09
5	Զրույց «Միջանձնային հարաբերություններ» թեմայով, զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	3.10
6	Բանավեճ «Ո՞վ է երկրի տերը» թեմայով:	10.10
7	Տեղեկատվական զրույց՝ «Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները դպրոցում», նպատակն է հիշեցնել աշակերտներին իրենց իրավունքներն ու պարտականությունները:	17.10
8	«Պետական խորհրդանիշներ» թեմայով զրույց: Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին:	31.10
9	«Բնապահպանական հիմնախնդիրներ»: Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության հրատապ բնապահպանական խնդիրների մասին:	7.11
10	Բանավեճ. «Հայրենիքի ծառա՞ն, թե՞ պետության»:	14.11
11	Զրույց «Ի՞նչ գիտես բուլինգի մասին, ինչպես դիմակայել բուլինգին դպրոցում և փողոցում» թեմայով:	21.11
12	Գնահատման մրցույթը հնարավորություն կընձեռի ավելի լավ ճանաչել իրենց շրջապատող անձանց և վերանայել կարծիքները:	28.11
13	«Բնական աղետներ». ներկայացնել բնական աղետների տեսակներն ու առաջացման պատճառները, դրանց հետևանքները մեղմելուն միտված գործողությունները:	5.12
14	Ամանորյա դիմակահանդեսի նախապատրաստություն:	12.12
15	Ծնողական և աշակերտական ժողով, առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:	19.12
16	Զրույց. «Ազգային մշակույթը՝ որպես համամարդկային	9.01

	մշակույթի մաս»:	
17	«Ազգային և միջազգային տոներ». նպատակն է ճանաչել տալ մեր և այլ ազգերի հետաքրքիր տոները, գտնել ընդհանրություններ ու տարբերություններ:	16.01
18	Զրույց. «Ի՞նչ են եվրոպական արժեքները»:	23.01
19	Բանավեճ. «ՏՀՏ-ի դերը ժամանակակից մարդու կյանքում»:	30.01
20	Հայոց բանակին նվիրված միջոցառման նախապատրաստում:	6.02
21	Զրույց. «Ազգային-կրոնական տոներ»:	13.02
22	Բանավեճ. «Ժամանակակից ուսուցչի և աշակերտի կերպարները»:	20.02
23	Զրույց. «Ի՞նչ է բաց հասարակությունը»:	27.02
24	« Ի՞նչ է ներառումը». աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքներ ունեցող մարդկանց նկատմամբ:	6.03
25	Պոեզիայի ժամ. «Գարնանամուտ»:	13.03
26	Ուսումնական հաջողությունների ու խնդիրների քննարկում:	20.03
27	Գործնական վարժանք. «Կոտրենք կարծրատիպերը»:	3.04
28	Տեղեկատվական զրույց. «Ապագայի մասնագիտություններ»:	10.04
29	Գործնական բանավեճ խնայողության և շռայլության մասին:	17.04
30	Հիշատակի և հիշողության խաչմերուկ. Եղեռնի թեման գրականության մեջ ու կերպարվեստում:	24.04
31	Զրույց. «Տիեզերքի մասին պատկերացումները հայ բանահյուսության մեջ:»	8.05
32	Ցերեկույթ. «Ես մի ծիլն եմ քո»:	15.05
33	Բանավեճ. «մարդու ո՞ր հատկանիշներն են կարևոր ժամանակակից կյանքի մարտահրավերներին դիմակայելու համար»:	22.05
34	Ծնողական ժողով, էքսկուրսիայի երթուղու մշակում: Աշխատանքի ամփոփում:	29.05